Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 356-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածով սահմանված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ 2025 թվական

Միջոցառում	Կատարման ընթացիկ վիճակը
Միջոցառում 1.3. Սննդամթերքի անվտանգության ոլորտում արագ արձագանքման համակարգի ներդրում	Մշակվել է««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Շահագրգիռ մարմինների կարծիքներն ու առաջարկությունները հաշվի առնելով՝ մշակվել է ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» նախագիծը:
Միջոցառում 2.1. Ազգային օրենսդրությունն ԵԱՏՄ և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության վերանայում, իրավական ակտերում սահմանված կարգով փոփոխությունների և լրացումների կատարում, ինչպես նաև մի շարք նոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունում	Մշակվել, շրջանառվել և ընդունվել է սննդամթերքի անվտանգության ապահովմանն ուղղված շուրջ երեք տասնյակ իրավական ակտ

Միջոցառում 3.3. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, մասնավորապես, Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության /ԿԱՀԿ/ կողմից պարտադիր ծանուցման ենթակա հիվանդությունների ախտորոշման և մշտադիտարկման մասով ռեֆերենս լաբորատորիայի նշանակում	Ազգային ռեֆերենս լաբորատորիա նշանակվելու պարտադիր պայմաններից է համապատասխան կարողությունների և հագեցվածության ապահովումը, որը պահանջում է զգալի ֆինանսական ներդրումներ և մասնագիտական ներուժ: Բանակցություններ են վարվում միջազգային կառույցների հետ՝ ֆինանսական միջոցներ ներգրավելու ուղղությամբ:
Միջոցառում 4.1. Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների ռիսկերի գնահատման գիտական կենտրոնների նշանակում	«Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու, կասեցնելու կամ դադարեցնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N 563-Ն որոշմամբ: Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք էջում 2025 թվականի հոկտեմբերի 27-ին հայտարարված Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու մրցույթի արդյունքում, «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ն հինգ տարով լիազորվել է իրականացնելու ռիսկի գնահատում անասնաբուժության ոլորտում՝ վիրուսային և մանրէային ծագման հիվանդությունների ցուցանիշներով (ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 3480-Ա հրաման):
Միջոցառում 4.2. Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառում ռիսկի գնահատման տարեկան գործողությունների ծրագրի մշակում	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների հետ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ՝ առաջնահերթությունները ներկայացնելու և սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառում ռիսկի գնահատման տարեկան գործողությունների ծրագիրը մշակելու նպատակով:

Միջոցառում 5.2. ՎՎՀԿԿ սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցերի մշակում և ընդունում ըստ ոլորտերի՝ սննդի ամբողջ շղթայով հետագծելիության ապահովման նպատակով	«Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի ներդրման ուղեցույցների հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի հրամանի նախագիծը հաստատվել է Էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի N 4018-Լ հրամանով և հրապարակվել Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:
Միջոցառում 6.1. Սննդամթերքի անվտանգության ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման դասընթացների շարունակական բարելավում	Էկոնոմիկայի նախարարության, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի սննդամթերքի ոլորտի մասնագետները 2025 թվականի մարտի 31-ից ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են «ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» EU GAIA ծրագրի շրջանակներում Ավստրիական զարգացման գործակալության, Պարադետ խորհրդատվական ընկերության կողմից կազմակերպված «Փոքր և միջին հանրային սննդի ծառայությունների և սննդամթերք արտադրողների համար պարզեցված և ճկուն ՎՎՀԿԿ համակարգի ներդրման վերաբերյալ գիտելիքների և կարողությունների զարգացում» թեմայով դասընթացին, որի շրջանակներում ներկայացվել է վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (այսուհետ՝ ՎՎՀԿԿ) դերը սննդամթերքի անվտանգության ոլորտում, վերջինիս ներդրման միջազգային փորձը, սննդի սանիտարահիգիենիկ կառավարման ընդհանուր համակարգում հետագծելիության գործընթացների նպատակները, ստուգման իրականացման ընթացքը, ինչպես նաև՝ համակարգի ներդրման ԵՄ սկզբունքները: 2025 թվականի դեկտեմբերի 2-5-ը, Առողջապահության և Էկոնոմիկայի նախարարությունների և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համապատասխան մասնագետները Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից կազմակերպված Հանրային առողջապահության հետախուզության (ՀԱՀ/PHI) հիմունքներին / «Համաճարակաբանական տեղեկատվություն բաց աղբյուրներից» (ՀՏԲԱ/EIOS) համակարգին նվիրված դասընթաց-աշխատաժողովի ընթացքում ձեռք են բերել վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական դիտարկման, վաղ հայտնաբերման, հետախուզության և արձագանքման ոլորտում ունակությունները բարձրացնելու, բաց աղբյուրներից (մամուլ, սոցիալական մեդիա, ոչ պաշտոնական զեկույցներ) առողջապահական տեղեկատվություն հավաքագրելու, վերլուծելու և գնահատելու հմտությունները (EIOS/ՀՏԲԱ համակարգ) զարգացնելու համար անհրաժեշտ գիտելիք և փորձ: Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Ագարակի սահմանային պետական վերահսկողական բաժնի աշխատակիցների և Մաքսային ծառայողների համար, Տեսչական մարմնի Սահմանային պետական վերահսկողության համակարգման բաժնի կողմից իրականացվել է

	«Անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական և սննդամթերքի անվտանգության սահմանային պետական վերահսկողություն» թեմայով դասընթաց: 2025 թվականին Տեսչական մարմնի և «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների վերապատրաստման նպատակով, Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (WOAH) կողմից կազմակերպվել է 8 դասընթաց՝ տարբեր թեմաներով: Վերոնշյալ մասնագետների վերապատրաստման նպատակով դասընթացներ են իրականացվել նաև՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից (Կենտրոնական Ասիայի և Կովկասի երկրների համար բրուցելոզի առաջադիմական վերահսկում թեմայով աշխատաժողով), Եվրոպական հանձնաժողովի «Ավելի լավ ուսուցում ավելի անվտանգ սննդի համար» նախաձեռնություն (BTSF) կողմից, Դաբաղի վերահսկման եվրոպական հանձնաժողով (EuFMD կողմից («Ռիսկերի քարտեզագրում՝ դաբաղի և այլ նմանատիպ անդրսահմանային կենդանիների հիվանդությունների վաղ հայտնաբերման և վերահսկման» թեմայով սեմինար), ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության (DTRA) (Մեկ առողջություն մոտեցման վերաբերյալ մարզային միջոլորտային աշխատաժողով) և Եվրոպական հանձաժողով, TAIEX գործիքի կողմից (ISO 17043:2010 ստանդարտի համաձայն որակավորման թեստերի նմուշների պատրաստման և հավատարմագրման TAIEX IND/EXP 83089 փորձագիտական առաքելություն): ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից «Կովկասում և Կենտրոնական Ասիայում մորեխների ազգային և տարածաշրջանային կառավարման բարելավում» ծրագրի շրջանակներում, 2025 թվականի նոյեմբերի 10-14-ը Ուզբեկստանի Հանրապետության մայրաքաղաք Տաշքենդում կայացած տարեկան աշխատաժողովի ընթացքում էկոնոմիկայի նախարարության և «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետների կողմից ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում մորեխների մոնիթորինգի ու պայքարի նպատակով իրականցված աշխատանքները, քննարկվել են պեստիցիդների կիրառման անվտանգության կանոնների ու սննդամթերքի անվտանգության վրա վերջիններիս ազդեցության, ինչպես նաև՝ 2026 թվականի ընթացքում պլանավորվող նախաձեռնությունների վերաբերյալ: Հանդիպման ընթացքում հաստատվել է 2026 թվականի մորեխների մոնիթորինգի և պայքարի աշխատանքային ծրագիրը, խմբագրական հանձնաժողովի կողմից կազմվել և հաստատվել է երկլեզու արձանագրություն: «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Հայաստանի Հանրապետության չորս մարզում 2025 թվականին տնտեսավարող սուբյեկտների համար կազմակերպվել են դասընթացներ՝ մշակաբույսերի արդյունավետ և անվտանգ պաշտպանությանն ուղղված հիմնական պահանջների և աշխատանքային մոտեցումների վերաբերյալ:

Միջոցառում 6.2. Սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա իրավիճակի գնահատման և ոլորտի բարելավմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) և պետական նպատակային մրցութային ծրագրերի իրականացման համար առաջարկությունների ներկայացում	Միջոցառման կատարումն ապահովելու նպատակով, քննարկվել և սահմանված ձևաչափով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացվել Էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ գործող «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ի Հայաստանի Հանրապետությունում բուծվող խոշոր եղջերավորների կենդանիների LGB, PRL, GH գեների պոլիմորֆիզմն ու կապը կաթնային մթերատվության հետ թեմայով և «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Կլիմայի փոփոխության պայմաններում աբիոտիկ սթրեսներին դիմացկուն լոլիկի նոր գենոտիպերի հայտնաբերում» թեմայով գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի հայտերը՝ երաշխավորող գրություններով: